



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԶԱԳԱՅԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 68

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27/9 ՆՈՅԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի Ճ Հոկտ. 27/9 Նոյեմ. Թիւ 68

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ՎԼԱՆԿԱՅԻ ԱԽՈՅԵԱՆԸ ԵՒ Ս. ԳԵՈՐԳԻՍ ԱՒԱԳԵՐԷՅԸ

Թուրքիոյ մայրաքաղաք ի Կ. Պոլիս, Գումգարուի յարակից Վլանկայի թաղերէն մտնն մէջ էր որ Տէր Կոմիտաս՝ Փոքր Ասիոյ մէջ Նիքոտայ և Կարնայ միջնա գտնուող Էկին քաղաքէն գաղթած Քէսովերճեանց ազնուական և բարեկեցիկ Էջմիածնական Հայ ընտանիքէն աշխարհն եկաւ Քրիստոսի 1656 թուականին: Հայրը՝ Տէր Մարտիրոս անուանով բարի և առաքինազարդ Քահանայ մ'ըն էր. իսկ մայրը Յուդիտա կը կոչուէր որ երեցկին ըսուելու արժանի ծանրաբարոյ և համեստաբայ տիկին մը ըլլալով կը զերազանցէր իւր գասակիցները, Այս երկու ամուսնու ընկերան իրենէ անուամբ աղջիկէ մը զաւտ, նաեւ երեք մանչ զաւակներ, որոնց առաջինը Երեմիան կ'անուանուէր, որ Սամաթիոյ Սու-

լու Մանաթրը կոչուած Ս. Գէորգայ եկեղեցւոյն Աւագ սարկաւազն էր : Իսկ երկրորդը՝ Մարտիրոս, Գումգաբուի Պատրիարքարանի Աւագերէցն էր . երրորդն էր Կոմիտաս :

Կոմիտաս ի մանկութեան՝ Սամաթիոյ մէջ դատարարակուեցաւ Այնթապի Մէնա սնուէն բարձրաստիճան եկեղեցականի մը հսկողութեան ներքեւ , և որովհետեւ ի ծնէ խիստ սրամիտ և մեծ տաղանդի տէր և գիտութեանց կարի մէտ էր , Գիշեր ցերեկ անընդհատ ուսմանց և գրոց ընթերցանութեան պարապելով լիովին իւրացուցած էր ճարտասանութիւնը , փիլիսոփայութիւնը և առտուածաբանութիւնը . ինչպէս նաեւ հին և նոր կտակարանները . իսկ նորը՝ բոլորովին բերնուց սորված էր :

Իւր բարուց ուղղութիւնը զինք մղեց եկեղեցականութեան , և ըստ էջմիածնական եկեղեցւոյ սովորութեան՝ Կեսարացի համեստ աղջկան մը հետ , զոր Հիւրիւ կամ Նինֆա կ'անուանէին , ամուսնանալէ յետոյ , Նւղիկիոյ Կիրակոս եպիսկոպոսի ձեռամբ քահանայ ձեռնադրուեցաւ : Մեկօրեկ Սուպի Սրբազանին օրով որ 1693ին Պատրիարքական Աթոռ բարձրացած լլլալով Հռովմի հպատակութիւն յայտնած էր , Տէր Կոմիտաս , որ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Աւագերէցն էր , նոյն ուղղափառ դաւանութիւնը յայտնապէս դաւանեցաւ Սրբազան Պատրիարքին Կ . Պալտոյ ընդհանուր եկեղեցեաց համար տուած հրահանգին համաձայն , — զոր կ'ապացուցանէ Ղալաթիոյ Յիսուսեանց զիւանատան մէջ պահուած յիշատակարանը և 1701 Նոյեմբեր 12ին Մեկօրեկ Սուպիին առ Կղիմէս ԺԱ . Սրբազան Քահանայապետն գրած նամակը : Տէր Կոմիտաս չէ թէ միայն իրեն յանձնուած եկեղեցւոյն մէջ բոլոր Կաթողիկէ եկեղեցւոյ արարողութիւնները կէտ առ կէտ գործադրեց , ինչպէս Ղալաթիոյ Մօլլայի աւջիւ կատարուած հարցաքննութեանց արձանագրութիւններէն ակնյայտնի կ'երեւայ , հապա ինքն ալ բացայայտ դաւանելով և քարոզելով Ուղղափառ Ս . եկեղեցւոյ վարդապետութիւնները , իւր բարի օրինակովը և ուղղամիտ իրատարանութիւններովը էջմիածնական Հայոցմէ շատերը ճշմարիտ Կաթողիկէ հաւատոյ ծոցը քարձուց :

Տէր Կոմիտաս բարձրահասակ , գեղեցիկ դէմքով , ալիսառն մօրուքով , ախորժելի ձայնով պերճախօս , պարտաճանաչ և ոգիլից եկեղեցական մ'էր , անուանի Ս . Գէորգայ եկեղեցւոյն քահանաներուն մէջ ըստ տեսականին և ըստ գործնականին կատարելութեամբ : Իւր եկեղեցին կը վարէր ամենայն հոգածութեամբ , բժախնդիր Առտուածային , պաշտամանց կանոնաւորութեան , եկեղեցւոյ և սպասուց մաքրութեան նախանձայոյզ ողջամիտ վարդապետութեան Ս . Հաւատոյ Կաթողիկէ եկեղեցւոյն , և Աստուծոյ պատուիրաններուն պահպանութեան և իւր բարի վարուքը , յԱռտուածայինս խանդավառ սիրովն ամէնուն սիրտը առ

Աստուած առաջնորդելու կարծես ընածին ձիրք մը ունէր, որով տիպար կը հանդիսանար եկեղեցականութեան: Չինք տեսնող և իւր խօսքը և ձայներգութիւնը լսողը կը հմայուէր, հետեւաբար խիստ յարգուած և սիրուած էր, ոչ թէ միայն իւր շուրջը գտնուողներէն, իւր հասարակութենէն, այլ նաեւ լատիններէն, յոյներէն և առ հասարակ իրեն հետ կերպով մը յարաբերութիւն ունեցող ո և է անձինքներէն: Խոնարհ, հեղանոգի, քաղցրաբարոյ, դիւրամատչելի մանաւանդ աղքատ դասակարգի, ի մի բան Աստուծոյ և մարդկանց առջեւ հաճելի, և ունէր գիտակցութիւնը Ս. աստիճանին վսեմութիւնը յարգել տալու: Հրապարակաւ և առանձին իւր փողովուրդը կը հրահանգէր, ստահակները կը յանդիմանէր և ուղղափառ հաւատոյ ճշմարտութիւններուն հետեւելու կը յորդորէր, և այնպիսի օծումը սրտաբուլիս արտասանութեամբ, պերճաւորութեամբ, և խանդով կը քարոզէր որ, ունկնդիրները ապշած կը մնային, և անոր բերնէն ելած հմտալից, հանճարեղ ու յանկուցիչ խօսքերը, պիտի ըսեմ, իբրեւ մէյմէկ թանկագին գոհարներ իրարմէ կը յափշտակէին, և Աստուծոյ բանին աւանդուած ժամանակի տեւողութիւնը իրենց համար խիստ սուղ կուգար, ու չէին ուզեր որ քարոզը վերջանար և կ'օգտուէին հոգեպէս: Շատ եկեղեցիներէն կը հրաւիրուէր մանաւանդ Աւագ Ուրբաթ գիշերի չարչարանաց քարոզը խօսելու: Անգամ մը այդ քարոզի առթիւ չափ զգալի եղաւ եկեղեցւոյ մը մէջ իրեն բացակայութիւնը, որուն պատճառը ուրիշ բան չէր եղած եթէ ոչ ումանց նախանձը: Տէր Կամիտաս Քրիստոսի ներքին անաւոր տառապանքները, չարչարանաց մանրամասնութիւնները այնպիսի կենդանի գոյներով, զգացումով, ելեւէջներով կը պատկերայնէր որ, եկեղեցւոյ մէջ ներկայ եղող խումբն իրարմէ թափուցեալ մէջ ամենակարծր սրտերն իսկ կ'ազդուէին, և չարտասուող մը չէր գտնուէր: Իրեն՝ մանաւանդ այդ կտակի քարոզները ունկնդրելու կուգային Պոլսոյ ամէն կողմէն բազմաթիւ մահմետականք, բարձրաստիճան անձնաւորութիւնք, պերճախօսութեանը զմայլողք, ամէն դատակարգէ, ամէն հասարակութիւնէ, ամէն հասակէ, վերջապէս հոռոմք, լատինք. և Տէր Կամիտաս քոհանայն կ'անուանէին նոր Ոսկեբերան մը: Ինչպէս վերը անցողակի մը նշանակեցինք, երգեցողութեան մասին ևս գերբնական և հրեշտակային ձայն մը ունէր, որմէ իւր ժամանակակիցները չկատացան, չարականներու այն ոգեպարար բառերը, զորս մեր Ս. Հարք գրած են, և են մէյմէկ թանկագին գանձեր, և ի զուր պիտի ճգնինք գտնալու ուրիշ ո և է ազգի քով, այնպիսի գերբնական թրթռացումով մը կ'եղանակէր որ բառերը չհասկցողն իսկ անոր իմաստը՝ եղանակովը լիովին կ'իմանար: Չըսուի թէ չափազանցութիւն է. Աստուածային ձիրք մըն էր և վկայուած ժամանակակից սրտմխներէ, յորս մանաւանդ Վենետիկի Միլիթարեան Հ. Մատթ. Եւդոկիացին, և եթէ հնար ըլլար երկու հարիւր տարի ուռաջ

մեռած ունենդիրներէն մին յաւնէր, ձեզ պիտի վկայէր անշուշտ գրած-
ներուս ճշտութիւնը:

ԷԶՄԻՍՄՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԷՋ

ԿՂԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԻՆ ԵՒ ԱՐԴԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ու է հասարակութիւն կը բազմանայ երկու տարրերէ, կղեր և
ժողովուրդ: Աշխարհիս վրայ գիւղ մը, աւան մը, քաղաք մը չկայ,
որ կարենայ գոյութիւն ունենալ առանց ունենալու այն երկու էական
տարրերը, որոնք իրարմէ բնականապէս չեն բաժնուիր, որովհետեւ
առանց կրօնքի աշխարհս այսինքն մարդկութիւնը կեանք չէ ունեցած,
չկրնար ունենալ, և ոչ ալ պիտի ունենայ: Կրօնքը Աստուծոյ գոյու-
թեան հետ առնչութիւն ունի, մասնաւոր թէ Աստուծոյ գոյութիւնն
է պատճառն որուն համար պէտք է որ աշխարհիս որ և է անկրէնը ուր
մարդիկ կը բնակին, հոն կրօնքն ալ բնականաբար գոյութիւն ունե-
նայ, և մարդն արդէն այդ պէտքը կը զգայ իւր մէջը, այսինքն
զԱստուծոյ պաշտելու պարտականութիւնը: Անհաւատը, անկրօնը, նոյն
խոյն անատուածը, այսինքն, այդ բնական ձայնը որտէն մէջ ի զուր
մարեղ աշխատողը, երբ նեղի դայ, մահը զգայ, երկինք գոտան, փայ-
լակները օձաին, երկիրս շարժի, գէթ որտէն «Աստուծո» կը գոչէ: Որմէ
կը հետեւի թէ, հակառակ այն անպրամներուն՝ «Ասաց անպզամն ի
սրտի իւրում թէ սչ գոյ Աստուծո» զիրենք և ուրիշները խաբելու հա-
մար օտեղծած սուտ փրկիւթոյնութեան և վարդապետութեան, մարդս
պէտք է բնականապէս ճանչնայ անուրանալին զԱստուծոյ, անի սիրէ,
անոր հաւատայ, զանի պաշտէ ուղիղ, անսխալ, անսայթաք, ճշմարիտ
կրօնքով ինչպէս որ Աստուծոյ ինքն կուզէ, կը յայտնէ ու կը սահմանէ,
և ոչ թէ մարդկանց քմահաճոյքին համաձայն:

Արդ, այդ բնական ճշմարտութիւնը և անոր ուղիղ ճամբան ճանչ-
ցող, յԱստուածակոյս կողմանէ հաստատեալ իշխանութիւն մը, դատաւի-
արակ մը, առաջնորդող մը, ուսուցանող մարմին մը պէտք է որ գո-
յութիւն ունենայ աշխարհիս վրայ: Առանց վարանելու պիտի բռնէք
թէ այդ մարմին, այդ էական տարրը կղերականութիւնն է, առանց
որոյ հաւատացեալ ժողովուրդի գոյութեան գաղափար ունենալ հակա-
սութիւն մ'է, ինչպէս առանց ժողովուրդի կղերականութեան գաղա-
փար ունենալը նմանապէս հակասութիւն է: Հօտ՝ առանց հովուի, հո-
վիւ առանց հօտի, դատաւարակ առանց աշակերտի, աշակերտ առանց
դատաւարակի ևն. անհնարին է:

Չենք ուզեր խօսքը երկնցնել, վասն զի մեր նպատակը՝ կրօնքի,
և կրօնքի վարդապետութեան վրայ ահսական ճառախօսութիւն ընել
չէ. արդէն Աստուծոյն վարդապետները այդ նիւթին վրայ այնքան

գրած են որ գրառումները լեցուեր են . պէտք է համառօտիւ բռնեք թէ եկեղեցական մարմին մը կայ որ զժողովուրդը յատուածայինս, բարքի, վարքի ուղղութեան ճամբուն մէջ կ'ուսուցանէ . անոր կ'առաջնորդէ ի մի բան ժողովրդեան բարոյապէս հոգի տուողն է . անի կազմողն է . անոր անբաժանելի և լրացուցիչ մասն է : Աբղ . հառարակութեան մը մէջ եկեղեցական մարմինը, որքան լուսաւորեալ, լի հանճարով, խոնձ, վարուք անրիժ . խոնարհ, պարկեշտ . կրօնական պարսականութեանց մէջ անթերի, Աստուածասէր, հաստատուն ի հաւատս, օրինաց նախ գործադրող՝ ապա ուսուցանող . օրինապահութեան մէջ պահանջկոտ, եռանդուն, անբասիր են . է, նոյնքան, իր հսկողութեան ներքեւ եղող ժողովուրդն ալ միեւնոյն առաքինութեանց մէջ հասուն, ուղղամիտ, հաստատամիտ և լուսաւորեալ պէտք է ըլլայ և կարելի չէ որ այլապէս ըլլայ : Ասկից երկու հարիւր տարի առաջ էջմիածնական Հայ հառարակութեան հոգին, որ է եկեղեցականութիւնը, կ'զերը, այն աստիճան դրական յաւալի վիճակ մը ունէր որ, ցաւ ի սիրտ և դողալով, կարմրելով կ'ըսէինք, որակելու համար համապատասխանող բառ իսկ չըլժուարուէր կը գտնենք . արձամարհանք մըն էր վերջապէս . արտաքուստ զարդարեալ դերեզմաններու ալ չէր նմանէր, զարչելի, ժահհոտ Աբղաւրիւ ինչպէս ուրիշ կերպ ըլլար : Եկեղեցական իշխանութիւնը որ արդէն կրից բորբոքման հետեւ անքով ճշմարտութեան և ուղղութեան աղբիւրէն՝ կոճղէ բաժնուած սատի մը պէս չորնալու ենթարկուած էր, պէտք էր որ բնականաբար ընկրկէր իրարուոյն և հսկայ քայլէր առնէր զէպի կործանումն : Հաւատքը իրենց մէջ բոլոր ճիւղերովը թարչամած, ճշմարտութեան լոյսը մարած, առանց առաջնորդի խաւարի մէջ մոլորեալ կը թափառէին : Եկեղեցականութիւնը երկուքի կը բաժնուէր, մէկ մասը կրօնաւոր որ և կուսակրօն, թէեւ անուանական, սրտնք և ապագայ եպիսկոպոսներ, պատրիարքներ, կաթողիկոսներ, իսկ միւս մասը ժողովրդեան հետ չփման մէջ գտնուող ամուսնացած տէրտէրներ : Առաջինները առանց կոչման պահանջած յատկութիւններու և նուրբ քննութեանց, հաւաքուած, վանքերու և կամ միաբանութեանց իրրեւ արդիւնք, սեւեալ դատակարգ մը կը կազմէին, որոց սակաւաթիւներուն ուսմունքն և կամ կատարեալ գիտութիւնն ուրիշ բան չէր եթէ ոչ սոհմային լեզուն, Հայոց պատմութիւն, քիչ չափ թուարանութիւն, ճարտասանութիւն, համառօտ աշխարհայրութիւն և Ս . Գիրք, Նարեկացիի, Շնորհալիի, Լամբրոնացիի, հայ և ուրիշ մի քանի սուրբ հարց գրութիւնները, որոնց մասին կատարուած ուսումնասիրութիւնն ալ արդէն մակերևութային, ոչ թէ էական, հիմնական էր : Ահաւասիկ բոլոր այս գիտութիւնները, այսպէս բռնեք, կը ծառայէին միմիայն ազգութիւնը, նոյրենասիրութիւնը, անձնասիրութիւնը և փառամոլութիւնը կատարարար պահպանելու : Ս . Գրիգոր Լուսաւորիչէն առանդ

ձգուած կրօնքը պահպանելու արծարծելու մասին սառուցեալ ծով մը
ըսուելու չափ անհագութիւն, պաղսութիւն, անտարբերութիւն կը տիրէր
և բնաւ փոյթ, եռանդ, հոգածութիւն, նախանձ չփնտռէր: Որմէ
կրնայ ամէն ոք հասկնայ և եղբակացեայ թէ իրենց պարծանքն եղող
հաւատքը, կուսակրօնութիւնը, վարքը, լարքը, համետութիւնը և
ասոնց բոլորին վրայ ունեցած զաղտփարնին ո՞ր տատկանի արժէք
կրնան ունենալ, և իրրեւ փիլիսոփայական և արամարանական հետեւու-
թիւն պիտի ըսենք թէ այդ ոգւով պատրաստուած եկեղեցականք,
միշտ բացառութիւնները յարգելով, պիտի ծառայէին աւելի աշխարհի,
կրից, ամբարտաւանութեան, անձնասիրութեան, հեշտութեան և մա-
մոնայի, քան թէ Աստուծոյ հաւատոյ, կրօնից և ճշմարտութեանց,
մանաւանդ թէ ինչ որ սուրբ է նսեմացնելու և քայքայելու այն սա-
կաւ ինչ ի հուսց մնացեալ կրօնքի և առաքինութեանց զգայունները
որոնք թերեւս խնամքով պահպանուած էին քիչերու քով:

(Շարունակելի)

ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Համաժողովին Բ. հանդիսաւ որ գումարումը տեղի ունեցաւ Սկպտ.
12ին յետ միջօրէի:

Գմբեթարդ սրահը [Rotonde] առջի օրէն աւելի հոծ բազմութիւն
մը հաւաքուած էր. քաղաքապետական պաշտօնականներու կողմէ ապա-
հովուած հրաշալի կարգապահութեան չնորհիւ, առանց խնդուածի, ա-
ռանց ամենափոքր իսկ խառնակութեան, անցող պարծերը մեքենական
ճշդութեամբ կը կատարուէին: Այսօրուայ գումարման մէջ Կայսեր ներ-
կայացուցիչն էր պաշտօնապէս՝ նայնինքն գահաժառանգ իշխանը՝ Արհի-
դուքս Ֆէրդինանտ, որ հազիւ թէ կը տեսնուի՝ ուրախութեան
գոչիւ մը դուրս կը ժայթքեն ներկաներու կուրծքերէն, ամէն լեզուով,
կովկիսա, հոփս, պրսկո՛, վի՛վ չ'աշխիտդ, սրախո՛, եղեհն, հե՛յ հե՛յ: Կէց-
ցէներու այս արտառոց հնչիւնները յոյց կուտային արդէն ներկայից
ինչ ազգութեան պատկանելները, գերման, մաճառ, իտալացի, սլավ,
չէք ու թումանացի. բոլորնայի և ուրմէն հոծ ի հոծ: Ոչ նուազ էր
նաեւ սմանց ազգային արարաւորներու արտառոցութիւնները, աչքի վար-

նող ու շաշուցիչ գոյներ, որոնց ամբողջութիւնը բիւրաւոր մարգ-ծա-
ղիկներու բուրաստան մը կը ձեւացնէր:

Գահաժառանգին կ'ընկերանային իր տիկինը աը Հօնէնպէրկ Ար-
հիդ-քսուհին. Մեծ-Դքսուհի Մարիա-Եղէֆա և Մաքս. Փրանկիս-
կոս-Սալվաթօր արհիդուքան իր զաւակներով. Մարիա-Վալէրիա Ար-
հիդ-քսուհին իր աղջիկներով, Մեծ-Դուքս Լէսլուա-Սալվաթօր, Եղէֆ-
Օգոստոս Արհիդուքս և Աւիուսլա Արհիդ-քսուհի՝ ծնեալ իշխանուհի
Պալէրիայ, Արհիդուքս Էօժէն, Մեծ-Դքսուհին Ալիսա աը Թօսքան,
Բարմայի Դքսուհին և իր աղջիկները, Դուքս Ռօպէրթ Վիլթէմպէրկ
իւր տիկինով, Մեծ-Դքսուհի Ալիսա, Արհիդ-քսուհի Գլօթիլտ, իշխանուհի
Մաթիլտա աը Սաքս. իշխան Գաալիէ աը Փարմ, որոնց ամէնքն ալ Կայ-
սերազուն տունէն էին, և ամէնքն ալ ունենալով իւր հետեւորդ իրենց
պատուակալ այրերն ու կիները, կայսերական սենեկապետներ ու բա-
րապաններ, որոնք հոյակապ ու փառաւոր թափաք մը կը կազմէին
ազնուորհարներու, կամներու և Դքսերու, իշխաններու և պարօններու
հետ, և այս ամէնուն կը խառնուէին ծիրանազգեստ հինգ կարգիւնաւ-
ներ և յիսունի չափ եպիսկոպոսներ մանիչակազայն տարազով, որոնց մէջ
կը տեսնուէր նաեւ Չինաստանէն եկող եպիսկոպոս մը չինական տարա-
զով՝ ամէնուն ապշահար ականարկը իր վրայ ձգելով:

Նիստը դեռ չսկսած՝ պատուիրակ-կարդինալին առաջարկին վրայ
սա հեռագիրը տալ որոշուեցաւ Ս. Պապին:

Եւ. Վենափառութեան Փրանկիսկոս-Յովսէփ կայսեր բարձր պաշտպանութեան տակ
գումարուած Ս. Հաղորդութեան Համաժողովին ներկայ եղող ստեղծուէկ Կարդինալները,
եւրջ 450 եպիսկոպոսաց եւ Բաճանայական ու աշխարհական կարգէն եղող անթիւ
բազմութեան նետ, յարգալից համաձայնութեամբ պատկառ կը կենան Չ. Ս. յորդրական-
ներուն, հոնպիտուպէս կը խոստանան որդիական հնազանդութիւն, եւ եռանդազին կ'ա-
յօրեն Փրիչին՝ որ պահպանէ Չ. Ս. կեանք ու առողջութիւն շնորհէ երկրի փայ. Էւ
չլէ Հայրը իր բժնամեաց ձեռքը: Պաղատակին կը խնդրեն խոնարհաբար առհեղական
օրհնութիւնը իրենց Վենափառ պաշտպանին, անոր փառապանծ Տան եւ իրենց ամենուն
համար:

Պատկառելի ժողովը ոտքի վրայ մտիկ կ'ընէր ընթերցումը, և երբ
վերջացաւ՝ միահամուռ որոտընդոստ ծափերով ողջունեց զայն:

Եւ անմիջապէս սկսան հառախօսութիւններուն: Յոյժ գեղեցիկ
էր քաղաքապետական խորհրդական Տօքթ. Յովս. Պուկաթթօ տէ Կրա-
սիսքաի հառը, որու մէջ կը յիշատակէր գարուչին կրօնաւոր Մարկոս
տ'Ավրանդի դէպքը: Ասի, Թուրքերու կողմէ Վիեննայի երկրորդ պա-
շարման պահուն, մեծ դեր խաղացած էր, և որու 229րդ տարելիցը
հիշտ այսօր կը յանգէր քանի որ յիշեալ պատմական մեծ դէպքը տեղի
ունեցած էր 12 սեպտ. 1683ին: Տ'Ավրանսօ սգի իրօրին աշխատած էր
հրահրելու համար պատերազմիկները, յետոյ վճռական վայրկեանին իր
օրհնութիւնը տուած զօրագունդերուն. որոնց քաջութեամբ թշնամին

պարտուելով՝ Վիեննա և Վիեննայի հետ ամբողջ արեւմտեան քրիստոնէութիւնը փրկուած էր ընդ միշտ :

Յետոյ խօսեցաւ Մօնս . Ռէնէ , Միլուանքիի [Milwankee] — Հիւս . Ամերիկա — Սրբեպիսկոպոսական թեմին ընդ : փոխանորդը , բնիկ թիւրքի , Տրիսկենդեան ժողովին վրայ , արթնցնելով այսպէս իր հայրենեաց յուշերով միասին , յիշատակը այս մեծ ժողովին՝ որ խօսած էր Ս . Հաղորդութեան վրայով , և ցոյց տալով թէ Պիոս Ժ . ի հանած բարենորոգման հրամանագիրը Ս . Հաղորդութեան համար , ճիշդ հետեւանքը են ու քրեթէ կրկնօրինակը ներմուծուած յեղաշրջումներուն ու զիտաւարութիւններուն այս մեծ ժողովին՝ որու անունն ու վարդապետութիւնները արձանագրուած կը տեսնենք Ս . Հօր հրամանագրոյն ճիշդ գլուխը :

Ասոր յաջորդեց Հ . Անաղօ , Յիսուսեան , Վիեննացի : Հրաշալի ձայնով և յստակ շեշտով մը պատմեց ան՝ Հաղորդութեան կայսերական ընտանեաց ու Ս . Հաղորդութեան միջեւ շարունակ գոյութիւն ունեցած յարաբերութիւնները , ճառախօսը վերջիչելով Հաղորդութեան Տան բոլոր այն իշխանները զորս պատմութիւնը կը յիշատակէ իբր Եկեղեցւոյ բարերարներն ու Ս . Հաղորդութեան երկրպագուներ , հիմնադր ուղերձով մը , իշխող կայսեր հասցէին . ա՛յնպիսի հայրենասիրական զգացումներով մը կը խօսեցաւ ունկնդիրները՝ որ ինքնաբերաբար դուրս կը պոռթկայ ամէն նրսերէ Ս. Եսայիոյ կայսերական քայրիքը :

Վերջին ճառը կը խօսի Միւնսթէրի Մայր Եկեղեցւոյ քարոզիչը , Ատօֆ Տօնաէրս , «Գործաւորին երկնային ու երկրային հացը» բնարան առնելով : Ճառախօսը անցեալ պատմութենէ քաղուած մ'ընելով , կ'անցնի արդի կեանքի խնդիրներուն . ու կը վերլուծէ բոլոր ազդերուն ունեցած ամէնէն մեծ հոգը , գործաւորական հարցը : Ու կը բացատրէ թէ ինչպէս ամէն տեղէ տուի : Ս . Սեղանին մասնակցելով է որ գուժաւորը կը բորձրանայ և իշխաններու համահաւասար աստիճանով կը կերակրուի միեւնոյն աստուածային հացովը . աշխարհ կը բաժնէ , բայց եկեղեցին կը միացնէ ցեղերը , ընկերական վիճակներն ու տարիքները : Այս ճառը մեծ հմտութիւն մը կը բովանդակէր ու խոր ծանօթութիւն ընկերական հարցերու և գործաւորական պէտքերու : Եւ իրօք ալ ժողովարարին մէջ գտնուող բազմաթիւ աշխատատեղի դասակարգի պատկանող ունկնդիրները երկարածիք ու խանդավառ ծափերով կ'ողջունեն թէ՛ ճառախօսը , և թէ՛ ճառը միեւնոյն տեսն :

Ճառախօսութիւնք աւարտելուն՝ զահաւառանդ արհիւսքս կը յառաջանայ դէպի ճառախօսներն ու անոնց ձեռքերը սրտեղդումով սեղմելով , կը շնորհաւորէ զանոնք՝ իւրաքանչիւրին մէյմէկ պատշաճ խօսք ուղղելով , և այսպէս ցոյց տալով թէ որչափ ուշադրութեամբ մտիկ բրած էր իրենց : Մասնաւորաբար շնորհաւորեց Հ . Անաղօն՝ որու Հաղոր-

պուրկեան ընտանեաց հասցէին ուղղած յոյժ սրտաչարժ խօսքերը, զինք ա՛յն աստիճան յուզեր էին՝ որ շնորհակալութեան քաղցր ու ջերմ ար-
ցունքներով լեցուած էին իր աչքերը:

Իբր փակում այս երկրորդ հանդիսաւոր գումարումին, իրիկուն տեղի ունեցաւ կրօնական արարողութիւն մը Մայր Եկեղեցւոյ մէջ: Ա-
մէն ազգէ ու լեզուէ հոծ բազմութիւն մը լեցուած էր Ս. Ստեփանոս Եկեղեցւոյն մէջ:

Արարողութիւնը վերջացաւ Ս. Հաղորդութեան հանդիսաւոր օրհ-
նութեամբ:

Հոս երկոր պիտի լլլար յիշատակել տշխատութիւնները մասնա-
ժողովներուն զորս իւրաքանչիւր ազգութեանց պատկանող ներկայացու-
ցիչները ի դուռն կը հանէին իբր պատրաստութիւն յաջորդ ընդհանուր
գումարումին:

Նշանակելի է մանաւանդ, որ իգական սեռն ալ նոյնքան չափե-
կանութիւն ցոյց կուտար Համաժողովին ամբողջ տեւողութեանը: Ա-
նոնք ալ ուրոյն գումարումներով կը նկատուէին Համաժողովին առած
որոշումներուն, ու խանդավառ ճառերով՝ կը ջանային իրենց սեռակից-
ներուն մէջ Ս. Հաղորդութեան ջերմեանը տարածելու մի-
ջոցներն ուսումնասիրել:

Բայց որովհետեւ այս առանձին գումարումներու մէջ ստէպ կր-
նար Համաժողովին նպատակէն դուրս նիւթերու վրայ եւս վիճարկումով,
անոր համար, վերջին վայրկեանին խմորուելով թէ Ս. Քահանայապետին
իզն էր կարելի եղածին չափ նուազեցնել այս կարգի գումարումները,
կիներու Կաթողիկէ Ընկերակցութիւնները որոշեցին այլեւս չգումար-
ուիլ Համաժողովի առթիւ, և իրենց ընկերակցութեանց ծրագրին հա-
մաձայն գործելու:

Այսպէս կը փակուէր Ս. Հաղորդութեան Համաժողովին երկրորդ
հանդիսաւոր գումարումը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԵՐՐՈՐԴԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Սեպտեմբեր 13ին կէս օրէ վերջ տեղի ունեցաւ սոյն գումարումը
Բրադերի Դմքերարդին ներքեւ: Հակառակ տիրող սաղտկալիօրէն անձ-
րեւատ օդին, մեծ դաշլիճը ծայրէ ծայր լեցուած էր ժողովականներով:
Ներկայ էին Ն. Ա. և Կ. Բ. դաժաժառանգ Արշիպուքս Փրանկլիսկո-
ժէրտինանո իր ընտանիքով, բազմութիւն Արշիպուքսեր և Արշիպուքս-
նիներ, բոլոր Կարգինալները, Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները,
յիբաւի սիրալի էր պարզուած աեսարանը:

Սքանչելի ճառով մը բացուեցաւ նիստը Վիեննայի ժողովրդապետ
Մօնո. Յով: Ոթնօրէի կողմէ՝ Ս. Կղեմէս Հօֆպուէրի վրայով, զոր
երկարածիք ու բուռն ծափերով ողջունեցին հանդիսականք: Յետոյ

իօսեցան համալսարանական բրօֆէգէօր. Հ. Միքայէլ Հօֆման, Կոմս Ալֆրէտ Ռէսէկիէ՝ Վիեննայէն, Հ. Բոնապէնդ Բրօց՝ Պրլինի քարոզիչ եղբարց կարգէն, և վերջապէս Պրիւսի եպիս. Մօնս. Հեւելս:

Ժողովր տակաւին վերջ չգտած՝ Քանանայապետին կողմէ հեռագիր մը հասած էր ի պատասխանի Առաքելական պատուիրակին զրկած հեռագրին: Զոր բեմ ելնելով կարգաց Համաժողովին մնայուն մասնախումբին նախագահը Նամբուրի եպիս. Մօնս. Հելլէն:

Առ Նորին Վսեմութիւն, Կարդինալ Վան Ռօսսուս:

«Ետնապէս յուզուած հաւասքի շեղ ցոյցերէն ու Մեզ հանդէպ յայտնուած անկեղծ սերէն, սրագին շնորհակալ կ'ըլլանք Քեզ՝ ինչպէս նաեւ բոլոր միւս կարդինալներուն, մեր որդեկաց, յարգելի եղբարց՝ եպիսկոպոսներու, ու ձեզ ամէնուց յոյժ անկալի հաւասանցեալներու՝ որ հիմա խմբուած էք երկրպագելու գլխաւոր-Քրիստոս մեր Տէր, Ս. Խորհրդոյ երկնային պարգեւին մէջ, և քախանձանօք կ'ալօթենք Աստուծոյ՝ որպէս զի նախօրէն վարձատրէ ժողովին մասնակցողներն եւ ի նեան մեր խորին շնորհակալութեան, Հաղորդութեան Համաժողովին բարձր պաշտպանին, իր պերճաւորէ սան եւ ամէն անոնց որոնք համախմբուած են ի Տէր, հանուրեմբ կը շնորհենք Առաքելական Օրենութիւնը:»
«ՊՐՈՍ ՊԱՊ Ժ.»

Փոթորկալից ծափեր ու կեցցէ՝ Պիոս Ժ. աղաղակներ երկար առն թնդացուցին գմբեթարդ դահլիճը: Յիսոյ ժողովը ցրուեցաւ՝ աւելի քան երբէք խանդավառ ու քախանձեալ մէջ: (Շարունակելի)

ՄԵՐ ԱԶԳԱՅԱՅ ԱՌ ՄԵՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

Վիեննայի Միթթաքեանց Հանդէս Ամսօրեայ պարբերականը իր 1912ի Ծրդ թուոյն մէջ էջ 562, Հայ տպագրութեան 400 ամեակի տիտղոսին ներքեւ գանդառեցով թէ այս օտուր ձեւ չունի «համազգային» հաստատուած համազգային եւ պատուաւոր ծրագրի վրայ», և թէ՛ «Էջմիածնի Յանձնաժողովը... իւր սարօրինակ ընդացումը անհամաձայնութիւններ կը սերտանէ» և յիշատակելով այս դժուար թեմանց մի քանին, կը յարէ. «Յաւաքի հ որ «Մշակի» պէս քերքէ մը կը ցատկաւորուի այսպիսի ծրագիր մը. Ազգային մը որ համոզուած է թէ հայ բոլորէր հաւառ «Լուսաւորչական» մակդիրն ալ ունենալու հարկ չկայ, այս կէտն ուրիշ. «Հորիզոն»ին պաշտպանած են սարքեր զաղախուր մը չկրնար արշաւանել: Էջմիածնի Յանձնաժողովին Յոթեանը ոչ թէ ազգային, այլ դաւանաբանական տն մըն է՝ դաւանաբանական ծրագրով մը եւ, այսու Յոթեանին մասնակցութեան հովին իսկ կը զրկուին Հայ Կաթողիկէ եւ Բողոքական հասարակութիւնները. կը զրկուին Միթթաքեան երկու Միաբանութիւնները, որոնց ազգին մասնուցած գրական ծառայութեանց համեմատութեամբ՝ միւս բոլոր ազգային հաստատութիւններուն մասնուցածը «խաթիւ մի ի դուրս» է:

— Ուրիշ թերթ մըն ալ վերջերս տրտունջ և ցաւ կը յայտնէր թէ ինչո՞ւ Հայ Կաթողիկէ ունեւոր մը հազարաւոր ոսկիներ կը նուիրէ Էջմիածնական եղբայր, քանի որ անոնք այս ահաւել նուիրատուութեան բնաւ կարօտութիւն չունին, մինչդեռ մենք կարօտ ենք, եւ անոնք զմեզ բնաւ չեն մտածեր . . .

— Զգմարիտն ըսելու համար, մենք այս տեսակ գանդաւաներու չատ կը զարմանանք. Ժողովրդոց բարոյական նկարագիրն չուսումնասիրող, պարզ մարդոց գործ է այդ, Մեր Էջմիածնական ազգակիցներուն մեզի հանգէպ մեռցած գաղափարն ու զգացումը ճիշդ միեւնոյնն է ինչ որ էր հարիւրաւոր տարիներ առաջ. և չեն խորշիր թէ այս հայ ազգը վերակենդանացնողը եղած է բացարձակապէս Կաթողիկէութիւն. ասի վէպ չէ, պատմական ստուգութիւն է. Իսկ անոնք եթէ հիմա չեն հաւածեր զմեզ, շնորհ մը չէ. — չեն կրնար. Չէք տեսներ. ո՛չ միայն մեզի բնաւ նուիրատուութիւն են, չեն ընէր, այլ մեր արդար և անբու՛նաբարելի իրաւունքները կը խլին, կը զրկեն զմեզ ինչպէս յայտնի էրեւցաւ, Բանկայթի գերեզմանատան խնդրոյն մէջ. Կաթողիկէութիւնը իրենց աչքին փուշը, իրենց մղձաւանջն է. մինչդեռ Կաթողիկէ տարրը, ըլլա՛յ կղերական ըլլա՛յ աշխարհիկ. համեմատաբար չատ աւելի քաղաքակիրթ է. Կր մախան մեզի, ամէն առթի մէջ, երէկ Գումգարունէն, այսօր Էջմիածինէն, վաղը այլուստեք . . . Դիտեցէք որ մեր փառքերը բնաւ չեն յիշեր, պապանձումն Զաքարիայի. Իսկ հազիւ թերութիւն մը ունենանք, նոյն ընդ նոյն ի վեր կը հանեն զայն. կը պոռան, կ'աղմկեն. Իսկ եթէ վիճենք կամ կռուինք, ո՛հ, այն ասին փթոցուռոյց կը դիմեն հրահրելու. և անպատճառ ծայրացեղներու կողմը կ'ընդգրկեն, ապստամբները, կործանարարները կը դուռատեն, կը փառաբանեն, կը գրգռեն, կարծես կը գուրգուրան որպէս զի . . . կործանինք. Ասոր ալ նոր նմոյշ մ'ունինք, և՛ փառաւոր, եկեղեցական դասէն. Մեր ցուալի վերջին գործերուն մէջ՝ թո՛ղ թերթերը որոնք Տօնքիչօղութիւնը սպանիականէն աւելի յառաջ մղեցին, Պատրիարքարանն ալ պաշտօնապէս ապստամբներուն թեր ելաւ. անշուշտ անխոստովանելի ակնկալութիւններ ալ կը տածէր, զոր իբր թէ անզգալապէս խոստովանեցաւ ալ . . . Ինչ և իցէ, Հայ Պատրիարքական Փոխանորդը, Հայ Կաթողիկէ Արքեպիսկոպոսի մը պարզապէս նոյեւոր խնդրոյ մը մասին ըրած հարցումին պատասխանելու համար, — ո՛ւշ դրէք — զիմեց բանադրեալ վարչական բաւած Ժողովին, գիտէ՞ք ինչու. հարցնելու համար թէ այդ Արքեպիսկոպոսը ի՞նչ հանդամանք, ի՞նչ իրաւասութիւն, ի՞նչ ճոխութիւն ունի . . . ահա՛ ձեզի Պատրիարքարան մը որ եկեղեցական նուիրապետութիւնը, զոր կը պատճի ճանչնալ, կ'ոսնհարէ կր նախատէ . . . բայց զարմացէ՛ք. այն Պատրիարքական Փոխանորդը շարունակեց այն հոգեւոր գործերը նոյն բանադրեալ աշխարհական Ժողովոյն հետ թղթակցելով ահունել, առ ոչինչ

գրելով Կաթողիկոս մը և եկեղեցական իշխանութիւնը: Բայց այսպիսի անպարտաճանաչներն անհետեւական (inconséquent) ալ կ'ըլլան: Ինչու որ երբ ազգն սկսաւ ճգնաժամ մ'անցունել, — զարհուրելի —, այն ատեն այս միեւնոյն Պատրիարքական Փոխանորդը կշռելով վայրկիսանը, լրջօրէն գործելու ստիպողականութիւնը, Հայ Կաթողիկէ եկեղեցականութեան վարկն ու հեղինակութեան կարեւորութիւնը, հնար է՝ նաեւ թանկագին ըլլալը, մուսկոտ կամ անվրդով, ատմա մը գրեց Հայ Կաթողիկէ ուրիշ Արքեպիսկոպոսի մը հրաւիրելով զայն ի սուս Արշարունի Պատրիարքին՝ շատ կարեւոր խնդրոյ մը համար խորհրդակցելու... Ինչ էլ յիշումսիս!!... Քաղաքավար գտնուեցաւ Հայ Կաթողիկէ այն Արքեպիսկոպոսը վեհօրէն պատասխանելով պարզապէս թէ՛ նա պաշտօնական հանգամանք մը չու- նենալուն՝ պիտի չկարենար հաճեցնել նորին գերապատուութիւնը...:

Մենք այս դէպքերը ցաւով կը յիշենք, հարկաւ. և չըլլայ թէ կարծուի վայրկիսն մը որ այս փրկանութիւններու համար մեր ազգա- կիցներուն հանդէպ ունեցած անկեղծ սէրերնիս փոքու իւրիք նուազի. ո՛չ երբեք. մենք այն մեծ Քահանայապետին Պիտի Ժ. ի հարազատ զաւակներն ենք. որ իւր 22 Դեկտեմբեր 1911ի փառաւոր նամակն մէջ առ Հայ Կաթողիկէայս, ունի սա պարբերութիւնը.

«Սիրեցեք ձեր հայրենիքը եւ հայրենասուր ազգային փառքերը, վասն զի մարդիկէն իրաց մեջ հայրենասիրութենէ ազնուագոյն բան չկայ... Նոյնպէս ձեր մեջ փոխադարձ սէր ունեցեք... Սիրոյ սոյն ընդհանրակա- նութենէ մի՛ արտաքին զանոնք, գորոնք Մեզմէ եւ ձեր հաւատարմութենէն բաժնած է մոլորութիւնը. մանաւանդ քե՛զ ձեր վարձն անոնց մեջ պարկէշ ցոյց տուեք եւ օրինակաւ առ ձեզ ձգեցե՛ք եւ աղօթիւք օգնեցե՛ք»:

Այ՛ո, մենք կը սիրենք զիրենք, և կը ցաւինք երբ ատենենք թէ իրենց մէջ կրօնքը փճալումի ճամբան կը բռնէ՝ անկողորձն վտան- գելով ազգութիւնը: Եւ կը ցաւինք որ թոյլ չեն տար մեզ մերթ ընդ մերթ ըսել իրենց այս թերութիւնները, սխալները, քեանները. իրենք շարունակ կը նախատեն զմեզ և կ'անիրաւեն. իսկ երբ մենք ըսենք աղգատեալ կ'ըլլանք!!... Ինչո՞ւ կ'ատեն լոյսն ու ճշմարտութիւնը. կ'երևի թէ չեն ուզեր օգտուիլ կամ ուզուիլ:

Կը զարմանանք ուրեմն մերոնցմէ այնպիսիներուն վրայ, աշխարհա- կան կամ մասնաւանդ եկեղեցական. որոնք — կը սիրէինք յուսալ թէ ո՛չ առ աշխարհային շահույց — անդադար կը խնկարկեն զանոնք, և ազգա- սիրութիւնը անոնց հակելու մէջ կը կարծեն... Հտեանելով թէ՛ տուեալ առթի մէջ, ինչպէս զիրենք ալ կը նախատեն, կը քարկոծեն. կը հալա- ծեն:

Մենք, ճշմարիտ Կաթողիկէայքս, մըշտ ճշմարտութիւնն բռնեք, բարի օրինակ տանք, և աղօթենք. աշխատինք մեր հայրենասուր ազ- գային փառքերը շատցնելու. տա՛տ այսպէսով ճշմարտապէս սիրած կ'ըլ- լանք մեր ազգը:

ԿԱԹՈՂԻԿԷ

Հետեւեալը կ'ընդունի՞մք պատշաճ անձէ մը՝ ի հասարակութիւն:

Ծ. Խ.

ՊԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ 62^{րդ} ՅՈԴՈՒԱԾԸ

Օսմանեան կայսրերը Ֆաթիհ Սուլթան Մէհմէտէն սկսեալ Խաթիբը—
Հիւժայուններով, ֆէրմաններով, իրաւէններով քրիստոնեայ զանազան
հասարակութեանց տուած են առանձնաշնորհումներ, որով կ'ապահովուին
գլխաւորաբար կրօնական պաշտամանց անազարտ և անխափան կիրա-
ռումը, ինչպէս նաև եկեղեցական իշխանութեան հեղինակութեան ճա-
նաչումը:

Այլէ զատ յարմար տեսնուած է որ միջազգային դաշնագիրներով
ալ անգամ մը հ'ւս շեշտուի այս պարագան և գրեթէ բոլոր օսմանեան
գործերու վերաբերեալ դաշնագիրներուն մէջ որոշ արամազրութիւն մը
կայ այս մասին: Պերլինի վեհաժողովն (1878) ալ այս կէտը նկատողու-
թեան առած է ստորագրուած դաշնագրին 62րդ յօդուածին մէջ, որ
հետեւեալ կերպով խմբագրուած է.—

«... Dans aucune partie de l'Empire Ottoman la différence de re-
ligion ne pourra être opposée à personne comme un motif d'exclusion
ou d'incapacité en ce qui concerne l'usage des droits civils et politiques,
l'admission aux emplois publics, fonctions et honneurs, ou l'exercice
des différentes professions et industries.

«La liberté et la pratique extérieure de tous les cultes sont assurées
à tous, et aucune entrave ne pourra être apportée, soit à l'organisa-
tion hiérarchique des différentes communions, soit à leurs rapports a-
vec leurs chefs spirituels.

«Tous seront admis sans distinction de religion à témoigner de-
vant les tribunaux.»

«... Օսմանեան կայսրութեան ոչ մէկ մասին մէջ կրօնական տար-
բերութիւնը չի կրնար արգելք լինալ ոչ մէկուն առանձնական և քաղա-
քական իրաւունքներու գործադրման, հանրային գործերու՝ պաշտօն-
ներու ու պատիւներու արժանանալուն, և կամ զանազան արհեստներով
և ճարտարարուեստներով պարապելուն: «Բոլոր կրօնքներու ազատու-
թիւնը և արտաքին կիրառումը ապահովուած է ամենուն, և ոչ մէկ
արգելք պիտի չգրուի ո՛չ զանազան հասարակութեանց նուիրապետական
կազմակերպութեան և ոչ ալ իրենց հոգեւոր պետերուն հետ ունեցած
յարաբերութեանց:

«Ամէնն ալ, առանց դաւանական խտրութեան պիտի կրնան վկա-
յիլ դատարաններու մէջ:»

Որքան գեղեցիկ է այս յօդուածին պարունակութիւնը, դժբախ-
տաբար սակայն քանի՜ քանի անգամներ տոյժը ներկայացած և և կա-
տողութեան չէ առնուած այն: Մասնաւորապէս վերջին անգամ Սայիա

փաշայի դահլիճին, մութ ուժերու հաճելի լլլալու համար տուած որոշումը մեր ցաւալի խնդրոյն մէջ, բայէ ի բայ ուրացում մէջ Հայ-Կաթողիկէ նուիրապետութեան կազմակերպութեան, հետեւաբար հակառակ Պերլինի դաշնագրին 62րդ յօդուածին:

Նոյնպէս հակառակ է յիշեալ դաշնագրին՝ Եկեղեցիներու մէջ Զայնաւոր պատարագի թոյլ չտրուելը կարգ մը անդգամտ անկրօններու կողմէ: Վասն զի այսպէսով կրօնական ազատութիւնն և արտաքին կիրառումը խաթարուած կ'ըլլայ: Այս պարագան դատական լեզուով «ի պատէթի իխլալ իթմէք» կը կոչուի և պատժոյ ենթակայ է:

Պ. Ա.

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՎՍ ԵՒ ԿԱՅՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Օստրվարթ Բուսկոյ թերթը կը գրէ. «Դիտենք որ Սրբազան Հայրը որոշած է Կարգինպոստով գումարել յառաջիկայ Դեկտեմբերի 2ին, յորում, բաց ի կարգադրութենէ թափուր թեմերու վիճակաւարաց, Վեհափառ Քահանայապետը Կարգինպոստով զիտարկը պիտի գնէ հետեւեալ ծիրանաւորներուն՝ զորս անուանած էր 1911 Նոյեմբ. 27ին. Կարգ. Տէգոս ի Մախոյ, Արք. Վաղատօցիտի, Կարգ. Վիգոյ, Փախ.—Դեապ, Սպանիոյ, Կրգ. Պաւերդ, Ար. Օլմիցի, Կրգ. Սանթոս, Արք. Սիվիլիոյ, Կրգ. Նախ, Արք. Վիեննայ:

* Պրէպաւ քաղաքին իշխան—Արք., Կարգ. Իսթին երրակի յորեկանը, (եր 75դ տարին, քահանայութեան 50դը և Պրէպաւ քաղաքին, Արք.ութեան 25դը), մեծաւ փառաւորութեամբ տօնաւեցաւ նոյն քաղաքին մէջ իր բարձր թեմականներէն որոմք ճշմարիտ որդիական սիրով կը պաշտեն զինքը: Այս առթիւ քաղաքին թաղապետական ժողովը անուագիական սիրով կը պաշտեն զինքը: Այս առթիւ քաղաքին թաղապետական ժողովը անուագիական սիրով կը պաշտեն զինքը: Այս առթիւ քաղաքին թաղապետական ժողովը անուագիական սիրով կը պաշտեն զինքը:

* Պաւերդի թաղապետութեան Ս. Աթոռոյ մօտ գտնուող Դեապանն Պարոն Բէթթեր Կրուէնթայն, վերադարձած է ի Հոմ. մօտեցաւ պիտի գայ նաև Ս. Աթոռոյ քով Բրուսիոյ Դեապանն Պ. Ֆօն Միւնլպերկ:


* Ս. Քահայապետը Ունկնդրութեան ընդունեց Իտալիոյ Սթէօն քաղաքին եկած և Լորէթոյի նուիրական տունը այցելելէ վերջը Հոմ հասած չորս հարիւր ուխտաւորներու խումբը, առաջնորդուած Կարգ. Վիգէն ի թուրքիէ և բազմաթիւ Ֆրանսայի Եպիսկոպոսներէ: Հպատակութեան ճառը խօսեցաւ նոյն քաղաքին Եպիսկոպոս Արհ. Վիլլար, որու պատասխանեց Սրբազանն հայրական խոնդաղատանքով, հրախրելով զիրենք նմանութեան Յիսուսի Ս. Սրտին, քանի որ ինք գիտէր թէ այն քաղաքացիք շատ ջերմեւանդ են Յիսուսի Ս. Սրտին և նրանուհի Մարիամ Ալագօգի:

Նոյնպէս բազմաթիւ եկան Հոլանտացի Ուխտաւորներ ընդ առաջնորդութեամբ իրենց հովիւներուն:

* Զուիցերիոյ մէջ կաթողիկէ թերթ մը սկսաւ լոյս տեսնել անուն ունենալով *Sentinelle* (Պահակ կամ Պահականոց) և ծրագիր այսօրինակ. Զուիցերիացի՝ մինչեւ ոսկրները, եւ կաթողիկէ մինչեւ ծուծը: Մեր մաղթանքները:

* Հ. Նեմէզիոյ Օլմիցի Տաղ մը յօրինած էր ի պատիւ Ս. Սրտին Յիսուսի, որ ամ-

բող Սպանիոյ մէջ հրատարակուած Համբիթաց մրցումով մը իբրեւ առաջին պատկուած էր, Այս տաղը երաժշտութեան զնեւը համար նայնպէս մրցում մը բացուելով, այս օրերս 155 երգայարգար կտորներ (*compositions musicales*) հասած են ժիւրիին որ զանոնք պիտի քննէ. սաոնց մէջ գաղղիոյի և ամերիկոյի երաժշտականներու երկեր ալ կան:



ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Նորին Դերեքնակութիւնը ցաւակցական նամակ մը ուղղած էր տա. Վեհափառ Մարիա Գրիգորիա Մայր Թագուհին Սպանիոյ, իր երիտասարդուհի դստեր անդարմանելի կրօնատեն համար, Հոկտ. 17 թուականի մի պատուական գրութեամբ Նորին Վեհափառութիւնը, սրտազին շնորհակալութիւններ կը մատուցանէ Ամենապ. Հոգեւոր Տեսառն, և կը յայտնէ թէ իր միակ միջիմարութիւնն՝ այս դառնակակիծ կրօնատեն տալէ, ուրիշ բան չէ բայց եթէ այսպիսի բարձրաստիճան եկեղեցական Պետերու լի օծութեամբ սփոփարար խօսքերն և մանաւանդ աղօթքներն ի հանգիստ հոգւոյ սիրեցեալ ննջեցելոյն:

* Արհի. Օգոստինոս Արք. Սայեղեան, որ Ամենապ. Հոգեւոր Տիրոջ կողմանէ իբր Պատրիար տկան Այցելու զրկուած էր Զմմառու Վանքը, շուրջ երկու ամիս ամենայն եւռանդեամբ այս բարձր պաշտօնը ամենայն գովութեամբ կատարելով, և իր տեղեկագրութեամբ և Նորին Դերեքնակութեան տրամադրութեամբ հարկ եղած բարենորոգութիւնները ի գործ դրուելէն վերջը, մեկնեցաւ իր թեմն՝ ի Հալէպ: Ամենապ. Տէրն մասնաւոր շնորհակալութեան գիր ուղղեց իրեն:

* Դեր. Դրեգոր Ի. Վ. Ալքեան, որ վերականգն էր Զմմառու Կղերանցին, Ամենապ. Հոգեւոր Տեսառն 22 Հոկտ. և 3472 թիւ կնիգակուան կարգուեցաւ Տեղական Մեծաւոր Զմմառու փանքին: Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու մաղթանքները արժանաւոր Մեծաւորին:

* Կ. Պալայ Աւագ թեմին Կղերանցի տղայք փոխադրուեցան ի Ֆանարաքի, Վեհափառման Օգոստինեան Հարց ստացուածն եղող և հոյակապ ընդարձակ պարտկով մը շրջապատուած շէնքին մէջ, որ պիտի հետեին եկեղեցական ուսմանց: Հայերէն մատենադրութեան և լեզուի դաստիարակման նպատակաւ Դեր. Ներսէս Վ. փոխադրեալ:

* Անցած Երկուշաբթի օրը Ս. Յովսէփայ Աստուածաճօր ամեն ըլլալով, Արհի. փոխտորք Արք. Յովսէփ Դեր. Ռաբոտեան բաղմամբիւ այցելուներ ընդունեցաւ Կաթողիկոսութան մէջ, ի պատիւ իրեն սեղան մը տուաւ Ամենապ. Հոգեւոր Տէրն, յարում՝ բաց ի ներքին պաշտօնէութենէ, ներկայ էին նաեւ բաղմամբիւ հրաւիրեալք:

* Ամենապ. Հոգ. Տիրոջ հրամանին համաձայն եկեղեցիներու մէջ կը կատարուին հանգանակութիւններ ի նպատակ պատերազմի վերադարձող: Տեղեկութիւն կը տրուի մեզ թէ Բանկալթիի ժողովրդապետութեան մէջ Վիեննայի Միջիմարեան Հարք մասնաւորաբար ձեռնարկած են այդ նպատակահաւասարութեան, գործակցութեամբ Համեառ. Նորդեան, Սիւնոպեան և Դարագաշ տիկնանց, Տիկին Խանկեան մեծաքանակ շապկներ կը կարէ: Այսպէս ամէն կողմ մեծ փութկառութիւն ցոյց կը տրուի խեղճ վերադարձող մարդասիրաբար օգնելու անխորի:

* Դեր. Ամբրոսիոս Վ. Գրիգորեան խտրջուրի Գեղուտ գիւղին բաղմամբն ժողովրդապետը Պոլիս եկած է իր անձնական գործոց կարգադրութեան համար: Որով ընդունուեցաւ Ամենապ. Հոգեւոր Տեսառն:

* Առ. Բոյր Մեթիլաէ Մեղքիսեղեկեան՝ քոյր համանուն բարեյշատակ երեւի Ստեփան Եպի. ի, որ նայնպէս համանուն իր եղբորորդին՝ Արհի. Վիճակաւորին հետ Կարին գնացած էր, հրաման ստացաւ այս ձմեռ հոն մնալ և կարգադրել տեղւոյն վրայ քառասուն երկու տարիներէ ի վեր՝ մեծաւոր գիւղականութեամբ տաւաքելութիւն կատարող Ա. Յ. կուսանաց փանքին և դպրոցին ինչ ինչ տուկախ խնդիրները:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Պատերազմի բախդը թէև ձախող կը շարունակէ Օսմանցիներու թշնամին յառաջացած ըլլալով մինչև 1իւլէ—Պուրկազ և Ռոստոմի, սակայն թրքական պաշտպանութեան վերջին յենակէտը Չաթաղճայի ամրութիւնները բաւական յոյսեր կը ներշնչեն անկեալ ոգիները վերականգնանքնելու և կորովի պաշտպանողական միակ ցոյց տալու հետապնդող և յարձակող և Պոլսի վրայ քաղելու սրտած գտնուող Պուլկար թշնամունքն:

Հաղարուստ վերաւորեալներ փոխադրուած են ի Պոլիս, ուր մինչև իսկ դպրոցներ, պանդոկներ, ապարանք և Հասարակային պարապ շէնքեր հետզհետէ հիւանդանոցի կը վերածուին: Պոլսոյ ապահովութիւնը պահ մը վտանգուածի երևոյթ գգեցաւ և հակազգեցիկ յանկարծական դող մը տուաւ ժողովրդոց. բայց կառավարութիւնը վճռաբար միջոցներ կարգադրեց տնդորութիւնը պահպանելու, նոյն Տէրութեան գլուխը նոր փորձանքներ չափեղծելու համար: Կայսերական իրատէով մեծ տէրութիւններու պատերազմական նաւեր մուտ գործեցին Տարտանէլէն, և կ'ըսուի թէ մինչև 22 հազար պիտի բարձրանայ անոնց թիւը: Պաքանեան յաղթական տէրութիւնք արդէն վճռած կ'երևին ու և է գնով, իրրև փոխարինութիւն, բաժնել իրենց մէջ Եւրոպական Թուրքիոյ հողամասը, և կամ անպատճառ ինքնօրինութիւն պարգևել Ալպանիոյ և Մակեդոնիոյ: Այս եղբրական պատերազմին անցաւ դարձելու մէջ անգամ տիրահաշակ դեր կատարած է կ'ըսուի իթիթհասար սր այս տղէտներուն պատրաստողն եղաւ:

*. Պուլկարական պարսուքիւն Էսիրնէի աղջեւ.— Երէկ գիշեր ուշ տատն ստացուած լուրերու համաձայն՝ Էսիրնէի օսմ. զօրաբանակը քաղաքին հարաւային կողմը արիւնալի ճակատամարտ մը մղած է, որուն մէջ Պուլկարները չի կրնալով դիմադրել ետ քաշուած են: Օսմ. զինուորները թշնամին հաղածած են մինչեւ այն խրամները, զորս Պուլկարները շինած էին ի հարկին պաշտպանելու համար իրենց զինուորները, երբ Պապա Էսիրի առջեւ յողթութեամբ կա քաշուած էին:

*. Օսմ. Բանակը կը փախափ կոտորուի.— Սպայտեղիոյ Բ. նախագահ Մահմետ փաշա որ կառող բանակին մէջ զօրաբաժնի մը հրամանատարն է, երէկ ստիպադաբար Պոլիս գալով Վարչապետին այցելեց և երկար տեսակցութիւն մը ունեցաւ: Կ'ըսուի թէ Մահմետ փաշայի պաշտօնն էր յայտնել օսմ. դահլիճին թէ հաշտութիւն կնքելու համար բունակը բնաւ միջամտութիւն չընդունիր այլ ինքը իր անձնուիրութեամբ հաստատապէս մտադրած է թշնամին ետ մղել:

*. Ծանցակիւ յայտնութիւն Ռուսիա եւ Աւստրիա անհամաձայն.— Ստոյգ աղբիւրէ մը լուր կը արուի թէ պաշտանեան պատերազմին մէջ չէզոքութիւն պահելու համար Իռուսիոյ եւ Աւստրիոյ միջեւ կատարուած բանակցութիւնները եւքի մը Հայնզելով, վերջին պահուն այս մասին երկու տէրութեանց միջեւ բանակցութիւնները խզուած են:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տէր Կոմիտաս Բ ռեանայ	625
Վ. Ի. Ե. Ե. Ս. Հաղորդութեան Համագրային Համաժողովը	630
Պերիքի դաւնագրին 62րդ յօդուածը	637
Մեր ազգակցաց առ մեզ վերաբերումը	634
Տեղեկագրական	638

ԱՐՏՈՆԱՏԷՐ

30ՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐՈՒՆ-ԻՄԲԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպոստոլոս հասէսի Թիւ 27

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հասարակուեցաւ «Տարական Սկզբունք Բրիտանեական Վարդապետութեան, փոքրիկ զգայոց համար, հաստատել Հոգեւոր իշխանութեան եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեանս ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր ա-
136 եջերէ:

Բովանդակութեան յուշ, սեղմեալ եւ պարզ ... և որպէ-
րոցականներու ամենեւնի օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մընէ
անհրաժեշտ:

Գինը անհամեմատ կերպով աժան է. ամուր բոքակազմը՝ 2
դանեկան միայն:

Իմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց Թիւ 5:

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան :
 պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս եւ կը
 սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
 ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
 մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոք ամեն յուրերն համառոտ-
 ուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց,
 մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբեր կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան 'Ինեկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսով եւ
 կամ մէյ մէկ դրոնոց նամակադրումով :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամա յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Բերա, Պայքամ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinopie

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
 2.— Խմբագրութիւնս պատրաստեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ
 հրատարակել իրեն դրկուած ու է յօդուած:
 3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիլ:
 4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան քուղիքն մէկ
 կողմը միայն:
 5.— Ճանաչմանց համար հասնաւոր պայմանագրութիւնք կը վճարուին: